

Հայաստանը որպես ներդրումային երկիր

Հարգելի՛ ներկաներ,

Այսօր մեր պրոբլեմը արտադրական ծավալների մեջ է: Ես հաճախ եմ հանդիպում գործարարների, երբ Միացյալ Նահանգներից, Ռուսաստանից, Եվրոպայից պատվերներ են տալիս և մեր գործարանները չեն կարողանում այդ քանակն ապահովել: Այսինքն, մենք արտադրական ծավալների խնդիր ունենք, երկիրը փոքր է:

Շատ հետաքրքրական է, որ հազարից ավելի ապրանքի տեսականի ունենք և արտոնություններ, բայց ապրանք չունենք արտահանելու: Այսինքն զուտ որպես պետություն տարիների ընթացքում այդ ռեժիմը ստեղծել ենք: Մենք ունենք այդ պոտենցիալ, որտեղ բիզնեսմենը կարող է Հայաստան գալ, արտադրել և դուրս գալ հարևան շուկաներ՝ Վրաստանից, Իրանից սկսած մինչև Եվրոպա, Ռուսաստանից մինչև Ղազախստան: Ես ինքս էլ մեծ հույսեր եմ կապում ազատ առևտրի այն ոլորտի հետ, որ Իրանի սահմանի վրա ունենք: Հայաստանն այս առևտրականությունն ունի, և ժամանակն է դառնանք որպես լուրջ արդյունաբերական ծառայություններ մատուցող հարթակ տարածաշրջանի համար, ժամանակն է կարողանանք համոզել մեր խոշոր ձեռնարկություններին, արտասահմանի անհատներին. Էռնեկյանի փորձը ցույց տանք: Մենք Էռնեկյանի նման կարող ուժեր էլի ունենք:

Եթե հարյուր մարդ Էռնեկյանի նման Հայաստան գա, Իսրայելին զարգացման տեմպերով կանցնենք, հավատացեք: Փառք ասածո սերունդը, կրթվածությունը, կրթական համակարգի բարեփոխումներով ապահովում ենք, անկախ մեր հարևանի հետ հարյուրամյա թշնամանքի խնդրից: Երբ հաճախ ասում են, որ Հայաստանը ծովից հեռու է, ծով չունի, հարևանները թշնամի են, ամեն ինչ թանկ է Հայաստանում և այլն, պետք է ասեմ, որ մենք այս ծանր պայմաններում սովորեցինք ճանապարհներ գծել և աշխատել: Ես բոլորիդ մի բան եմ խնդրում, որ հավատով լցվենք մեր իրականության հանդեպ, մենք ունենք պրոբլեմներ, բայց հնարավոր է ուժեղանալ և առաջ գնալ:

Շնորհակալություն

Արսեն Ղազարյան,

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ